ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

DEPUTY MINISTER OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

«03» 04 2026 թ.

№ [illegible]/7023

«ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 00842776/

ՀՀ, ք. Երևան, Շոպրոնի 21

Հեռ.՝ 091-40-74-28

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԼՏ-Պիրկալ» ՓԲԸ-ի միջև 26.04.2017թ. կնքված N ԲԸԱՀԱՇՁԲ-13-6 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԼՏ-Պիրկալ» ՓԲԸ-ն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման արդյունքում պայմանագրի թեմայով նախատեսված աշխատանքները չի կատարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5 կետի «բ» ենթակետը՝ (կատարողը բազմիցս խախտել է սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի կատարման ժամկետները) ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.04.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԼՏ-Պիրկալ» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի **900005028106** հաշվեհամարին փոխանցել **4 020 000 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), **100 000 ՀՀ դրամ**՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.5 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 25.01.2023թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում ՀՀ պետական բյուջեի **900005570115** հաշվեհամարին ենթակա է վճարման նաև պայմանագրի առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված ընդհանուր **13 905 000 ՀՀ դրամը** (Պայմանագրի 6.5 կետի համաձայն):

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Տեղեկացնում եմ, նաև որ «ԼՏ-Պիրկալ» ՓԲԸ-ի կողմից ենթակա են վերադարձման ընկերությունում գտնվող 2 լրակազմ օպտիկաիետախուզական համալիրը:
Նշված գումարների վճարված լինելը հավաստող փաստաթղթերի բնօրինակները անհրաժեշտ է մինչև 2026թ. ապրիլի 13-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2077 սենյակ:

Հայտնում եմ, որ վերոնշյալ գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Տեղեկացնում եմ նաև, որ վերոգրյալի համաձայն «ԼՏ-Պիրկալ» ՓԲԸ-ն կընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ